

ՍԵՐ - ԲՆՈՒԹՅՈՒՆ - ՄԱՐԴ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ԱԼԱԳՅԱԶԻ ՄԱՆԻՆԵՐ» ՊՈԵՄՈՒՄ

ՄԱՐԻ ԶԱՔԱՐՅԱՆ

Ավ. Իսահակյանի առաջին «Երգեր և վերքեր», ժողովածուում տեղ գտած «Ալագյազի մանիներ» պոեմի մտահղացման մասին 1893 թ. (2 ապրիլի) պատանի բանաստեղծը «Հիշատակարանում» գրում է. «Կիսատ մի պարբերություն գրեցի «Հյուրի-վերի» բալլադից. հույս ունեմ, որ սա շատ լավ դուրս կդա: Երեկ գրեցի, այսինքն գրի առա բավական ժողովրդական «մանի, յայլի ջան-դյուլում»-ներ. ես՝ շատ եմ սիրում այդ պարապմունքը»¹: Չորս օր անց շարունակում է. «Երեկ վերջացրի «Հյուրի-վերիս». ահագին բան եղավ և բավական լավ է թվում. թեև համեմատած «ΔΕΜΟΝ»-ի և «Περί»-ի (Թ. Մուր) <հետ>... կուպեկ չարժե» (Հ, 44): Գրողի այս գրառումներին եթե մտովի հավելենք նաև սեփական գրական նախասիրությունների մասին ինքնախոստովանանքը («Իմ մանկության ժամանակ՝ 80-ական թվականներին... խորին տպավորություն է թողել իմ վրա մեր ժողովրդական երգը, դեղջկական երգը...»)², ապա հասկանալի են դառնում «Ալագյազի մանիներ» պոեմի ստեղծագործական ոչ միայն ազգային, այլև համաշխարհային նախահիմքերը:

«Ալագյազի մանիները» զբաղեցրել է Իսահակյանին շուրջ քսան տարի (1895–1917): Պոեմը բացող «Իմ բախտին» բանաստեղծության քնարական հերոսի տրամադրությունը՝ անպատասխան սիրո պատճառած անսիրոփ վիշտը հուշում է պոեմի հետագա շարադրանքը, ուր դրողը քննություն է ենթարկում մարդ էակի ամենաբարձր արժեքը՝ սիրո վեհ զգացումը: «Նախերգում» արդեն, սիրած աղջկան «մարմար Զարոյին», հրավիրում է ոչ թե անանձնության մեջ, այլ շքեղաշուք ու երազային բնության Ալագյազի գրկում ըմբոշխնելու իրենց սերը: Իսահակյանը վրձնում է կատարյալ, անեղծ բնության ոգեշունչ պատկերը՝ Արաբած լեռը, ասես Արամազդ աստծո վեհանիստ գահը, որի պերճ շուքի տակ աստվածներին և սրբություններին մոտ էլ պոեմի հերոսները գնում են վայելելու իրենց սերը: Թվում է պանթիստ Իսահակյանի ամենակատարյալ բնանկարն է սա («Արագածին», «Մանթաչին»), որը վավերացնում է բնության հրաշք գեղեցկությունը.

Դու, Արագած, այմաստ վահան
Կայծակեղեն թրերի,
Գաղաթներդ բյուրեղ վրան
Թափառական ամպերի (II, 9)

¹ Ա. Վ. Ի. Ս. Հ. Ա. Կ. Յ. Ն. Հիշատակարան (այսուհետև՝ Հ). Երևան, 1977, էջ 42:

² Ա. Վ. Ի. Ս. Հ. Ա. Կ. Յ. Ն. Երկերի ժողովածու վեց հատորով (1973–1979). Հ 6, Երևան, էջ 333: Այսուհետև մեջբերումներն այս հրատարակությունից. հատորը կնշվի հստակապես, իսկ էջերը՝ արաբական թվանշաններով:

Եվ պոեմի հերոսը ճակատին աստղե պսակ, թռչում է «ալմաստ, վահան» լեռան, լույս-փիրուզ լճակների³, շքեղաշուք մայր բնության գիրկը հրաշք գեղեցկություն մեջ վայելելու իր նորաբողբոջ սերը: Այստեղ էլ նա հաղորդակցվում է բնությանը պատրաստ լսելու դյուլթական աշխարհների, հուր-հավքերի մասին կախարդական հեքիաթը⁴ («Մանթաշին»), որը դյուլթում, կախարդում է, իսկ ալմաստ առուն, «մոր պես արթուն», մանկության քաղցր օրոր է շնչում: Բանաստեղծն ասես հեթանոս ժամանակների անեղծ ու կատարյալ բնությունն է վրձնում, որը «...միշտ առաջին պլանում է, ի տարբերություն միջնադարի և նոր ժամանակների»⁵:

«Զառ Մանթաշի» յայլավորների նկարագրությունից բանաստեղծն այնուհետև անցնում է մասնակի մանրակերտի սիրած աղջկա քողտիկին պերճ բուսականության մեջ, սարի լանջին, շրջապատված դառներով և ուլերով: Ահա և նա Զարոն սավորը ուսին ջրի գնալիս: Սա սիրած աղջկա հետ առաջին հանդիպումն է: Զուրը, որ լիության, առատության խորհրդանիշ է, այստեղ առնչվում է քրիստոնեական ավանդությանը. Սուրբ Սարգսի օրը երագում սիրած էակին ջուր տալը միաժամանակ սիրո պարզև է խորհրդանշում: Այս մտայնությունը էլ հյուսված է գեղեցիկ Զարոյին ուղղված ձոնը.

Նազ մի անիր, նազիդ մատաղ,

Անսեր սրտեն վազն արի (II, 14):

Պոեմի հետագա մասերում III-IV-V-VI, բանաստեղծը պատկերում է Զարո-բնություն հարաբերությունը. ինչպե՞ս է մեծ մայր բնությունն ընկալում, ընդունում Զարոյին. այդ տեսարաններում սիրահար պատանին գուտ ղիտողի դերում է ներկայանում.

Արևի պես, սիրուն Զարոս,

Շափաղ տալով դուն կուգաս,

...Ալ-վարդերը կրծքիդ վրան,

Լույս ցողերը ոտներիդ... (II, 14):

Զարոյի գեղեցկությունը գովերգելով պատանին նրա սերն է նվաճում, և աղջիկը, որպես սիրո առհավատչյա, համբույր է պարգևում: Սիրած աղջկա համբույրից՝ խենթացած պատանին սիրո ձոն է երգում համբույրի ոգեշունչ, արարող գործության մասին: Նա չի ուզում այդ համբույրը մեռակ վայելել, ցանկանում է այն պարգևել աշխարհի մարդկանց, որպեսզի նրա «Հոտն ու բույրը» հայտնի դարձնի սիրակարոտ սրտերին նրանց հոգիներն ամոքելու համար: Խենթ սիրահարը կամենում է, որ ողջ աշխարհը ըմբռնի սիրո այդ վայելքը.

³ Հեթանոս հայերին բնորոշ լեռան և ջրի պաշամունքը բնորոշ է եղել նաև աշխարհի բազմաթիվ ժողովուրդներին: Այսպես՝ չինական գեղանկարչության մեջ միջին դարերում լայն տարածում է գտել «Շան-շույ» կոչվող ժանրը, որ թարգմանվում է «լեռներ և ջրեր» (Культурология, история мировой культуры. М., 1995, с. 53):

⁴ Թերևս հրաշք բնության նման պատկերներն են հիմք հանդիսացել XVI դ. նիդեռլանդացի մեծ նկարիչ Պ. Բրեյգելի «Մարդկային է ոչ թե մարդը, այլ բնությունը» կենսափիլիսոփայության համար: Н. М. Гершензон - Чего да е ва. Брейгель Питер старший. М., 1983, с. 103:

⁵ Античность как тип культуры. М., 1988, с. 16.

էդ համբույրեն մի հատ էլ տո՛ւր,
Տանիմ աշխարհս ման տամ.
Ինչքան դառն սրտեր տեսնեմ
Տամ, հոտն առնին, անուշնան (II, 17):

Պոեմում բովանդակ բնությունը, նրա արարածներն են սիրո վայելք ասլրում. օդը, մթնոլորտը սիրո վայելքով են արբեցած.

Փետուրները պայծառ ոսկով
Հավքերն ուրախ ծափ կուտան,
Ու կարոտի, սիրու խոսքով
Իրար քնքու՛շ ձեն կուտան (II, 18):

Ողջ բնությունն է ձայնակցում նրանց սիրուն, և համընդհանուր այս հենքի վրա արդեն Ջարոն ներկայանում է ոչ թե իբրև սիրո անհաս ցնորք ու երազ, այլ իրական-չոչափելի, զդայական ու հասանելի էակ.

Դու ցերեկը ոսկի երազ,
Իմ գրկի մեջ, նազելի՛ս (II, 19):

Պատանի սիրահարի համար գիշերն ու ցերեկը դառնում են սիրո անանց, կախարդական մի հեքիաթ: Կյանքն ունայն է. իրականը մարդն է իր մեծ ու երազային սիրով: Սիրո վայելքն էլ բանաստեղծը վրձնում է պերճ բնության գրկում: Բոլոր դեպքերում բանաստեղծը պոեմում սիրած էակի դեղեցկությունն ու հրապուրանքը ղուգորդում է հրաշք բնությանը. Ջարոյի շրթունքները վառ, հուր վարդեր, աղբյուրի ափին իր արդուզարդով դբազված աղջկան մոտենալու համար էլ ինքը խենթ սիրահարն է թիթեռ դառնում սիրո ծարավը հագեցնելու համար: Ջարոն իր դրկում, շքեղաշուք բնաշխարհի մեջ էլ սիրահար սլատանին վայելում է իր երկրային մեծ սերը.

Եվ Ման-Տաղի երանավոր
Եդեմ ձորում ծաղկալի...
Մենք թևանցուկ, զվարթագեմ
Ջառ ծաղկունքով զարդարուն
Ուրախ, կայտառ և սիրաճեմ
Ճեմում էինք...
Ի՛նչ հրճվանք, խինդ անսահման
Վայելեցինք մենք այնտեղ
Մոռացանք վիշտ, ոգբ, թախիժ կական⁶...

կամ

Հեյ ջա՛ն, հա ջա՛ն, ցողն ու ակունք
Սրտիս խորքեն ծին կառնին (II, 20):

Սիրո այս երգով պոեմն ասես նոր բովանդակություն է ձեռք բերում. եթե մինչ այդ մարդը բնության հետ միաձուլ էր ու ներդաշնակ, ասլա «Բերդից» սկսած այդ փոխհարաբերակցությունը խախտվում է. պատանին թախանձադին աղաչանքով է դիմում աշխարհին, որ իր սիրուն արգելք չլինեն: Բնությունը փոխում է իր որակը, և պատանին խնդրում է փրփուր

⁶ Ե. Ջարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Իսահակյանի արխիվ, № 1, էջ 29:

կտրած առվին, փուշ ու մացառին, որ թույլ տան իր գիրկը գա սիրելին: Թվում է բնության խոչընդոտող տարրերի պատկերումը հավաստում է, որ պատանին սիրո երազային-հեքիաթային աշխարհից աստիճանաբար վերադառնում է դեպի երկիր իրական-ռեալ հողագունդ: Մարդը բնությամբ պայմանավորված էակ է, և կյանքում կան իրողություններ, հանգամանքներ, իրադարձություններ, որոնց առջև նա տկար է ու անզոր: Այս են հավաստում պոեմի հետևյալ տողերը.

Ետ գնացե՛ք, քար ու քուս,
Վարդեր, ճամփա ցույց տվե՛ք,
Փուշ ու մացառ, մեկդի քաշվե՛ք,
...Առու, փեշերդ դում արա,
Թողե՛ք Զարոն գիրկս գա (II, 21):

Իր և Զարոյի սիրո հենքի վրա էլ գրողը պատկերում է սիրած էակի հուզական ներաշխարհը (Բ, II): Մինչ սիրահար պատանին ցնորք-երազ երգով փառաբանում է բնության ամենաբարձր կատարելությանը Զարոյին, ազդիկը նրան պատմում է կապուտաչյա լճակի կողքին լացող ուռենու տակ թաղված սիրահարների ողբերգական անցքի մասին («Լճակի փերին»): Լճակի փերու կերպարը ներկա է Իսահակյանի վաղ տարիների բանաստեղծություններում: 1892 թ. նա գրի է առել Շիրակի մի ավանգավեպ, որը հետագայում վերնագրել է «Իմ փերին»: Փերին այստեղ սև մազերով է, մինչդեռ հայտնի է, որ նա դեղին, ոսկեգոծ մազերով է լինում («Լորեյայ»).

Նա փերի է գմրուխտ գետի,
Ցնորքներիս սիրելին.
Դիցուհին է իմ վառ սրտի,
Վառ երգերիս նազելին (I, 19):

Փերու ողբերգական ճակատագրի մասին պատմության վերհուշը, սակայն, չի տրամեցնում սիրահարներին. նրանք շարունակում են իրենց սերը վայելել.

Գլուխս դրած ծնկիդ վրան,
...Փունջ ծամերգ ծուփի նման
Ճակտիս վրա կըփռվին,
Ծփծփալեն համբույր կուտան,
Ու խենթի պես կըթռնին (II, 25):

«Գ երգը» բանաստեղծական ուրույն և ինքնատիպ տրամադրություն մե է ներկայանում: Եթե «Նախերգանքում», «Ա և Բ երգերի» բանաստեղծություններում գործողությունների սկիզբն է զարգանում բնության զարթոնք ու դեղեցկություն, սիրահար պատանու խենթ արբեցում, սիրո զմայլանք, ապա «Գ երգից» և նրա մասը կազմող ստեղծագործություններից սկսած սիրուց լիացած օրն ավարտվում է, և սիրո վայելք արբած բնությունը նինջ ու անդորր է ապրում: Հոգնել է նաև «չող մատներով» խենթ պատանու «սրտի հետ» խաղացող էակը. «...եղնիկի պես թևիս տակին կուչ է եկել»: Օրվա մեջ սեր ապրած հավքերն էլ են հոգնել, մաճկալը արորն է թողել, «դար ու դարափ» խոր քուն մտել, հոտը մութ ձորն է իջել: Բնության այս հանգիստն ու անզորը նորացման, արարման վկայություն է պոեմում: Շրջապատի այս խաղաղության մեջ էլ պոեմի քնարական հերո-

սր ցանկանում է լսել Ջարոյի երգը, և վերջինս էլ պատանու համար հյուսուում է իր սիրո երգը, որը նա երկրային ոչ մի արժեքի հետ չի համեմատում. այդ չափումները միայն երկնային են «լույս-արև, լույս աշխարհներ դառ. գոհարի»: Թերևս այս է պատճառը, որ երկնային գոհար դասին նվիրելուց հետո, ըմբռնելով իր սիրո մեծությունը, նաև վերացականությունը, աղջիկը շոշափելի, առարկայական ձևով է ասելիքն ավարտում.

Թող հյուսերս քանգեմ, տղաս,

Կրծքիդ վրա թել-թել անի... (II, 28):

Ջարոն էլ իր հերթին, սիրո անուրջներում, որպես հավերժական սիրո խոստում ու երգում, հեքիաթ է պահանջում սիրած տղայից, և ծայր է առնում «Գ երգի» VI մասը «Հեքիաթը», որի հերոսը կտրիճ իշխանադուռն է: Որսի դուրս եկած քաջ երիտասարդը, գերված չքնաղ հովվուհու գեղեցկությամբ, իր սերն է նրան խոստովանում: Սիրով արբած ասպետի զգացմունքները մնում են անպատասխան, քանի որ «եղնիկ-աղջկան» չեն գրավում թագն ու գահը. նա քաջ հովվի հարսն է: Հովվուհին այստեղ ներկայանում է սիրո բարձրագույն արժեքով. նա բնության զավակ է և չի գայթակղվում սիրուց խենթացած երիտասարդի խոստումներով: Սիրահար իշխանադուռն էլ ի՛ր սիրո ձոնն է հնչեցնում.

-Ապարանքս այս խրճիթն է այսուհետ,

Ու իմ բախտը՝ այս աղջկա ձեռներում.

... Իմ վրանս խփե՛ք սրա դռան դեմ,

Եվ հորս ասե՛ք, որ ես էլ տուն չեմ դառնա,

Սիրակարոտ այստեղ նստիմ, կըսպասեմ,

Մինչև որ ինձ այս աղջիկը մեղքանա... (II, 32):

Սիրահար ասպետը հրաժարվում է բարեկեցիկ կյանքից, որոշում ավրել բնության դրկում աղջկա խրճիթի կողքին հուսալով հրաշք աղջկա սերը: Հեքիաթը, ավա՛ղ, չի ավարտվում և ոչ միայն այն պատճառով, որ օրվա իրադարձություններից հոգնած Ջարոն քուն է մտնում, այլ

Սիրո հեքիաթը վերջ չո՛ւնի... (II, 33):

Օրագրային վաղ տարիների գրառումներից մեկում, ինչպես նշվեց, Իսահակյանը իր «Հյուրի-փերին» համեմատում է անգլիացի բանաստեղծ Թ. Մուրի «Լալա Ռուբի»⁷ երկրորդ պոեմի «Փերի և հրեշտակ» ստեղծագործության հետ, և այդ հոգեհարազատությունը ներկայանում է հատկապես «Հեքիաթում»: Թ. Մուրի պոեմը ազատություն և անհավաճան սիրո ձոններ է: Ազատության պայքարում զոհված սիրած տղամարդու մահվանն ականատես աղջիկն ինքնասպան է լինում նրանից չբաժանվելու համար.

Скончала смерть его страданье.

И дева, другу дав лобзанье

С последним всей любви огнем,

Сама за ним в лобзанье том

Желанной смертью умирает⁸.

⁷ Գրականագետ Ալբ. Մուշեղյանի հավաստմամբ՝ Իսահակյանը ծանոթ էր պոեմի՝ Ն. Գերբելի կազմած "Английские поэты в биографиях и образцах" ժողովածուից: «Լալա-Ռուբի» թարգմանել էր Վ. Ժուկովսկին (Ալբ. Մուշեղյան. Ավետիք Իսահակյան. Վաղ տարիներ, 1875-1898. Երևան, 1983, էջ 43):

⁸ Т. М у р. Избранное. М., 1981, с. 379.

Այսօրինակ սերը իսահակյանի երազանքն էր, որը և մարմնավորել է «Հավերժական սերը» ստեղծագործություն մեջ:

Ուշագրավ է, որ Ջ. Բայրոնը, անդրադառնալով Թ. Մուրի արևելյան պոեմին, հավաստում է, որ ոչ մեկը նրանից լավ Արևելքը նկարագրել չի կարող և քննելով պոեմի հերոսների զոսայական աշխարհը՝ շարունակում. «...այրող, կրքոտ, բորբոքուն ոգի... գեղեցկություն և նրբություն, ինչը բնորոշ է նաև նրա (Արևելքի – Մ. Ջ) դուստրերին»⁹: Հարկ է կարծել, որ սրեմում թերևս հենց այս հանգամանքն է գրավում պատանի իսահակյանին:

Հաջորդ ստեղծագործությունը, որի հետ համեմատում է նա իր «Հուրի-փերին», Լերմոնտովի «Դևն» է: Պոեմին ռուս մեծ քնարերգուն անդրադարձել է ողջ կյանքում: Աստծո դեմ ըմբոստացած և դետին տապալված հրեշտակի մասին առասպելը գրադեցրել է համաշխարհային գրականությունից յանակնավոր շատ դեմքերի՝ Ջ. Միլտոն, Ջ. Բայրոն, Գյոթե, Ա. դը Վինի, Ա. Պոլկին: Լերմոնտովյան «Դևի» ֆաբուլայում ասես ներհյուսված է և հեթանոս մտայնությունը (աստվածներն իջնում են երկրային դեղեցկուհիների մոտ), և՛ քրիստոնեական-միջնադարյանը (սատանան գայթակղում է միանձնուհուն). «...այս վերջինն ավելի մոտ է Լերմոնտովյան թեմային»¹⁰: Երկնքի հետ «Հսկարտ թշնամություն» ունեցող հրեշտակին միայն սերը կարող էր հետ պահել չարիք գործելուց, ինքնամաքման մղել նրան, և պատանի իսահակյանի խոհերը թևածում են վերերկրային, վեհ և ամենակարող սիրո աներևակայելի, հրաշագործ, գործության շուրջ.

Хочу я с небом примириться,
Хочу любить, хочу молиться,
Хочу я веровать добру¹¹.

Լերմոնտովյան մեկնություն համաձայն, թվում է, գգվանքի ու սիրո բացակայությունը, այն վայելելու հույսի տարակայունությունն է Դևին դարձրել դաժանություն և չարություն մարմնացում: Ահա և Լերմոնտովի վրձնած սիրակորույս տղամարդու կերպարը՝ արդիական բոլոր ժամանակների համար, արտաքին-ֆիզիկականը հոգևորի հայելի.

Каким смотрел он злобным взглядом,
Как полон был смертельным ядом
Вражды, не знающей конца, -
И веяло могильным хладом
От неподвижного лица¹²

«Ալագյազի մանիներ» սրեմում սեր-բնություն-մարդ եռանկյունին նոր որակով է ներկայանում «Դ երգում»: Բացվող օրն իր հետ բերում է մարդկային հարաբերությունների նոր որակ, և նոր օրն էլ հեղինակն օժտում է յուրօրինակ բովանդակությամբ. եթե մինչև այդ առաջին սլանում

⁹ The Poetical Works of Tomas Moore, vol. 3, Paris, 1829, p. 164.

¹⁰ Лермонтовская энциклопедия, М., 1981, с. 135.

¹¹ М. Ю. Л е р м о н т о в. Избранные произведения в двух томах. Т. 1, М., 1963, с. 552. Այլ դեպքում պոեմում Լերմոնտովը Թամարին «փերի» է անվանում. «Как пери спящая мила, Она в гробу своем лежала» (նույն տեղում, էջ 555):

¹² Նույն տեղում, էջ 558:

Ջարոյի և պատանու իգիլիկ սիրո պատկերն է, ապա «Դ երգից» այդ սիրո հեքիաթի հենքը որոշակի փոփոխութեան է ենթարկվում. ավելանում են ազգային կյանքին, կենցաղին, սովորութիւններին առնչվող մանրամասներ.

Վարդավառի տոնն է այսօր,
Քողք են կապել սարվորներ,
Ձի կըխաղցնեն վանքի բոլոր
Ձենք ու զարգով կտրիճներ (II, 34):

Պոեմի այս գլխում սեր-բնութիւն-մարդ փոխհարաբերութիւնները ներկայանում են Վարդավառի տոնի հենքի վրա.

Սարվոր կանայք խոտով-ցախով
Բորբոքել են վառ օջախ.
Համով-հոտով, օրհնած աղով
Կեփեն ուխտած, սուրբ մատաղ (II, 34):

Այստեղ է, որ ականատես ենք ոեալ, իրական կերպարների. սիրահար պատանու ընկեր տղերքը սեզոտ մարդագետնին ուրախ սեղան են բացել, հուրհուրում է կարմիր գինին, սարնիվեր հնչում է դհոլի ու զուռնայի հզոր ձայնը: Քեֆ անող պատանիների ընկերակցութեան հենքի վրա էլ հայտնվում է կտրիճ պատանին, որը խենթացած զուռնայի սիրո ու կյանքի կոչող նվագով, սկսում է իր պարը: Արբշիտ պարի, զհուր-զուռնայի, հոգին թինգ հանող ձայնին ականջալուր հեղինակը պատկերում է վշտաբեկ հոգով, անպատասխան սիրուց հոշոտվող ցավ ապրող մի այլ սիրահարի: Յոթ տարի է սիրած աղջիկը նրան սև գարգի մեջ է թողել: Տեքստի մեկնութիւնից պարզվում է, որ սիրուց մերժված պատանին հենց ինքը բանաստեղծն է, և նրա սերը Շուշիկի հանգեպ: «Ալազյազի մանիները» նվիրված է Ջարոյին, և թվում է Ջարոն գրողի չգիտակցված սիրո մարմնավորումն էր, և այս առումով էլ պոեմն ընդհանրապես իր «քայլող սիրուն» Շուշիկին է վերաբերում: Անպատասխան սիրո մորմոքի զգացումը ողջ կյանքում բանաստեղծը կրել է իր հոգում, և այս առումով էլ պոեմում Իսահակյանը մեկն է մերժված սիրո համաշխարհային ողբասացներից:

Պոեմն առանձնանում է նաև իր շարժուն-գինամիկ կառուցվածքով ու սյուժետով: «Տղայի երգից» հետո հեղինակը պատկերում է Վարդավառի տոնախմբութեան մանրամասները.

Վառ-վարդերի տոնն է այսօր
Հարս ու աղջիկ զարդարուն
Պտույտ կգան օրոր-շորոր
Վարդափթիթ լանջերում (II, 38):

Վարդավառը հայոց հին հեթանոս ջրասպաշտութիւնն է «Անահիտի ջուրերու գեղուհին ի հիշատակ», երբ ջուր են սրսկում ժողովրդի վրա, Աստղիկի հիշատակին աղավիններ թուցնում և վարդեր սփռում: Գուցե և՛ ջուր սրսկելը, և՛ աղավիններ թուցնելը արձագանքն է ջրհեղեղին և նոյան աղավինուն. «Հայոց Նավասարդն է Վարդավառը, որ նոյան ջրհեղեղի հիշատակը կկատարեն ջրով ջրելով իրար»¹³:

¹³ Զ. Պ. Պ ո ո ս ե ա ն. Ներածութիւն հայ հոգեբանութեան. Կահիրե, 1958, էջ 79:

«Ալյաբյազի մանիներում» եթե «Տղայի տաղը» մերժված սիրո արցունք է, մինչև երկինք առաքվող տանջանք ու հառաչանք, ապա աղջիկների երգը սիրո կանչ է՝ երազների ասպետ «էն տղին ուղղված», սիրո սպասում: Մեկ տարի իր երազների երկրպագուին սիրակարոտ աղջկա հոգին ու մարմինը, որպես զմրուխտ թռչուն, թևածում են գեպի սիրած էակը.

Սարի սրին ձյուն կշողա, -

Սիրտս էրվեց քու սերին.

Սարերն ելնեմ, կարոտ տղա,

էրված սրտիս ձյուն բերեմ:

... Տարի բոլոր քեզ չեմ տեսել,

Մեռնիմ ես քո տեսնողին:

Ա՛խ, երանի զմրուխտ - թռչուն,

Զմրուխտ - երազ լինեի,

Թավուացի բարձիգ անքուն,

Աչքերդ անուշ պագնեի (II, 39):

Աղջիկների այս առաջին երգում եթե սիրակարոտ աղջիկն ինքն է ուղղում թռչուն դառնալ, թավուալ երազների ասպետի բարձի վրա, ապա հաջորդ երգում արդեն սիրատոջոր աղջիկը բլբուլի «ձորի զուլալ առվակի, սարի բարակ հովի» միջոցով է խաբրիկ ուղարկում սիրած տղային: Այստեղ հետաքրքիրը աղջկա լուր ուղարկելու բազմաբնույթ ձևն է, երբ բնության բոլոր երևույթները ներդաշնակորեն նպաստում են սպասվող սիրո վայելքին: «Աղջիկների երգը» հատվածում երազային սիրո հենքի վրա էլ հեղինակի ուշադրութունը շեղվում է դեպի ռեալ իրականություն՝ Վարդավառի տոնակատարութունից դեպի վանք, վանքի բակը, ուր կույր աշուղն է միացել ցնծացող երիտասարդներին: Երազային սիրո հեքիաթին զուգահեռ հնչում է աշուղի զրույցը դժբախտ սիրահարների մասին: Ավանդական մի զրույց է սա. գեղեցկուհի մի աղջկա բերդի տիրուհու հմայքով գերված բազմաթիվ ասպետներ բռնել են բերդի ճանապարհը նրա սրտին տիրանալու համար: Սակայն նա, ավա՛ղ, նրանց անսահման սիրուց ձանձրացած ու հոգնած, երես է շրջել բոլորից: Իսկ վերջին ասպետը, որն արդեն ծանոթ էր կանացի քմահաճույքներին, չի խոնարհվում նրան. գեղուհու հպարտ գեղեցկութան հանդեպ մնալով անտարբեր նա նվաճում է ինքնապրած դիցուհու սերը.

Աղջիկը նրան ձայն տվեց.

Կանչեց, լացեց, որ ետ գար.

Ու երբ չեկավ, խելագար

Բուրգեն իրան վար նետեց (II, 41):

Աշուղի դժբախտ սիրո պատմությանն ունկնդիր Վարդավառի քեֆ-ուրախութունը, սակայն, շարունակվում է. կյանք տեսած, սիրո դառնութունը ճաշակած կույր աշուղի հողեղեն, երկրային զրույցը չի սթափեցնում խենթ սիրո շուրջպար բռնած աղջիկներին և պարմանիներին: Պարբերաբար յուրաքանչյուր հեղինակ տղա, թե աղջիկ, իրենց սիրո մենախոսությամբ են ներկայանում ամեն վայրկյան պատրաստ այդ մենախոսութունը վերածելու երկխոսության: Սիրո երկխոսությանն էլ սկզբից մինչև վերջ մասնակցում է ազգային հենք ծառայող, պարբերաբար արժե-

քափորող, տրամադրությունն առավել բորբոքուն դարձնող խումբը: Աղջիկներն ու տղաները, արբեցած սիրո գինով, գովերգում են սիրո աստվածուհու՝ Աստղիկի տոնը՝ սիրո և որդեծնության արարումով: «Դ երգի» բանաստեղծության մեջ էլ ավարտվում է երկրորդ օրը: Չնայած ֆարուսների տարբերությանը, թվում է սյունի այս հատվածը հարազատություն ունի Թումանյանի «Անուշին»: Անուշի դժբախտ սիրո ողբ ու կոծին ձայնակցում է աղջիկների ողջ խումբը և փորձում ամոքել նրա անսիրտ վիշտը («Մի տրտմիր, Անուշ... Մեր ձեռքով հանած մի անմիտ վիճակ... Սուտ բան է, քուրիկ, դու մի հավատար, լուկ պատահական մի չար խոսք է սա»)՝¹⁴, իսկ «Ալադյադի մանիներում» կույր աշուղն է ռեալ ու սթափ գնահատում իրողությունը: Ձահեկները, սակայն, նրան չեն լսում, իրենց սերն են արժեքավորում, երազելով աստղից աստղ թռչում և սիրո ինքնամոռացության մեջ քուն մտնում աստղերի մեջ: Սիրո այս իդիլիկ պատկերով էլ ավարտվում է Վարդավառի երկրորդ օրը: Թումանյանի մոտ, սակայն, հրճվանք-ուրախությունն ընդհատվում է, և Անուշի դժբախտության զգացողության մեջ ասես իրենցն էլ են նրանք փնարում և վերագառնում դեպի իրականություն:

«Ալադյադի մանիների» «Ե երգում» սիրո երանության երազային հենքի վրա հեղինակը շարունակում է աշուղի երգի տրամադրությունը, և այս են հաստատում բանաստեղծական սլակերները՝ արնոտ սրտի մորմոք, բլբուլի խոցված սիրտ և որպես դժբախտ սիրո վկայություն երկնքից ընկնող սլայծառ աստղ՝ որպես ոչ միայն սյունի հերոսի, այլև ընդհանրապես փշրված սիրո խորհրդանիշ: Այսօրինակ զգացումով էլ պատանին կանգնում է սիրած աղջկա դռան առջև: Չկար սիրած էակը, որին որպես ընծա բերել էր իր սիրատոչոր սիրտը: Աղջկա բացակայությունն անսիրտ մորմոքի տրամադրությամբ է համակում նրա հոգին: Պատանին երազի մեջ էլ չի կարողանում իր կարոտն առնել, քանի որ նրա հոգում տագնապ ու վիշտ էր ծնել նաև գիշերվա տեսած երազը: Այն չարագուշակ էր և ավետում էր սիրո ավարտը. սիրած աղջկա դավաճանության բոթն էր գուժում. «Իր քայլող սերը» այլ երիտասարդի հետ էր կապույտ լճակի վրա ոսկե նավակով դբոսնում:

Տղան մարդրիտ մանյակ ուներ

Յարիս վղին կախ արավ.

Արդյոք չըլնի՞, շորոր հովե՛ր,

Իմ եղնիկին յար արավ:

Յարիս նրա դրկում տեսա

Համբույր կառներ ու կուտար.

Ա՛խ, ինձ ափին մեռած տեսա

Ուռին վրաս լուռ կուլար... (II, 42)

Հայտնի է, որ Իսահակյանի մեծ սերը դառնում է սիրած էակի հարսգատների նյութապաշտ հակումների գոհը, և գրողի օրագրային էջերի վկայությամբ տասնամյակներ անց անգամ այն վերապրում է իբրև

¹⁴ Հ ո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. Երկեր երկու հատորով. հ. 2, Երևան, 1958, էջ 54:

գալարվող, հոշոտող ցավ և ողբերգությունն՝ «...տիեզերքի խորությունն ունեն իմ սերը...» (Հ, 284):

Որպես եղելություն բացատրություն թերևս տեղին է Ա. Լոսևի պնդումը, համաձայն որի «Անտիկ զգայական, նյութական տիեզերքը... պահանջում էր գաղափարի հավերժ վերագարձ... այդ ժամանակներում հրաժարվում էին չարի վերջնական բացատրությունից՝ ամեն ինչ հանգեցնելով ճակատագրին»¹⁵:

Այս բանաստեղծությունը («Ե երգ, III») արդեն հուշում է բանաստեղծի դժբախտ սիրո ավարտը, որը պոեմում մինչ այդ նկարագրվածների մեջ ամենաողբերգականն էր: Սիրած յարին ուրիշի գրկում տեսնելու վշտին չդիմանալով նա իրեն մեռած է տեսնում, հոգեբանական այն վիճակը, որը երկար ժամանակ ունեցել է ինքը՝ բանաստեղծը: Հեղինակը երազից իրականություն է վերադառնում: Զարոյի հովիվի դուռը փակ է. ծայր է առնում նրա ողբը. «Դուռդ բաց արա, մեռնիմ քու շեմին...»: Չդիմանալով սիրած աղջկա դավաճանությունը՝ սլատանին այժմ էլ ինքն է աղոթք մըմնջում. հեռանալուց առաջ նա գոնե իր գերեզմանը փորեր, քանի որ կյանքն իր համար արդեն դարձել է ունայն և անմիտ.

Գերեզմանս գեթ փորեիր
Վերքիս նման խորն, անտակ,
Քու ձեռքերով ինձ թաղեիր
...նոր երթայի՛ր, է՛յ անգութ... (II, 51)

Կյանքից հիասթափված ու տառասլած սլատանին, համոզված, որ ժամանակի մեջ գոյությունն չունի որևէ մնայուն արժեք, քան մոր անմնացորդ, անփոխհատույց ու մաքրամաքուր սերը, վերադառնում է մոր գիրկը նրա սերն իմաստավորելով որպես բնություն շքեղաչուք սլարդև: Աշխարհից դառնացած ու խոցոտված որդու հոգին միայն մայրն է ի գորու ամոքելու.

- Աղիզ մերիկ, դուռը բաց,
Քու որդին եմ, խոցված կուզամ,
Անուշ մերիկ, գիրկդ բաց... (II, 52):

Այս տրամադրությունը ներկա է ոչ միայն Իսահակյանի մայրական թեմային նվիրված ստեղծագործություններում, այլև օրագրում «Հիշատակարանում»:

«Ալադյազի մանիներ» պոեմը այս առումով էլ մայրական սիրո յուրօրինակ ձոն-փառաբանություն է: Ինչպես գրողի բանաստեղծություններում, լեգենդներում, ասուլթներում, փիլիսոփայական խտացումներում, այստեղ ևս այդ հուզասլատումները ներկայացվում են սիրո, հավատարմություն, անձնագոհ նվիրվածության ալեբախումներով:

¹⁵ А. Ф. Л о с е в. История античной философии. М., 1989, с. 16, 29.

ВЗАИМОСВЯЗЬ ЛЮБОВЬ – ПРИРОДА – ЧЕЛОВЕК В ПОЭМЕ
АВ. ИСААКЯНА “АЛАГЯЗСКИЕ МАНИ”

МАРИ ЗАКАРЯН

Р е з ю м е

Истоки поэмы “Алагязские мани”, по свидетельству “Дневников” Ав. Исаакяна, восходят не только к армянскому фольклору (“мани”, “йайлу”), но и к написанному в ранние годы неизданному произведению “Ури-пери” (“фея”), которую сам поэт сопоставляет с поэмами “Лала-Рук” Т. Мура и “Демон” М. Лермонтова. Ав. Исаакяна в поэме “Алагязские мани” занимает психология любви, и писатель, прибегнув к помощи ряда легенд, анализирует ощущения горести и страданий героев из-за отвергнутых чувств. Герой, переживший неразделенную любовь, находит в матери утешение в своей трагедии и в этом аспекте кажется, что поэма — произведение, посвященное материнской любви.